Ազգ
Azg
7 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2004 ԵՐԵՔՇԱԲԹԻ 219 (3150)

## Կուչմա. «Յանուկովիչի տեղը լինեի, կհանեի թեկնածությունս»

Ուկրաինայի գործող նախագահը «Նյու Յորք թայմսին» տված հարցազրույցում ասել է, որ եթե լիներ Յանուկովիչի տեղը, կհաներ թեկնածությունն Ուկրաինայում կայանալիք նախագահական ընտրություններից: «Յանուկովիչն ասել է, որ չի հանի իր թեկնածությունը: Ես չեմ բացառում, որ ընտրությունների փոխարեն մեզ մոտ կլինի հանրաքվե մեկ թեկնածուի մասնակցությամբ: Ես չեմ ցանկանում ասել, որ հենց այդպես էլ լինելու է, սակայն ամեն ինչ դրան է գնում», ասել է Կուչման եւ Ուկրաինայի ներկա ճգնաժամի մեջ մեղադրել ընդդիմության առաջնորդ Վիկտոր Յուշչենկոյին, ինչպես նաեւ Յանուկովիչին, ԱՄՆ-ին եւ Եվրոպային:

## Գիտե՞ք ով է Յուշչենկոյի կինը

Ուկրաինայի ընդդիմության առաջնորդ, դեկտեմբերի 26-ին կայանալիք նախագահական ընտրությունների երրորդ փուլի թեկնածու Վիկտոր Յուշչենկոյի կինը՝ Կատերինա Յուշչենկո-Չումաչենկոն ԱՄՆ քաղաքացի է եւ ԱՄՆ պետքարտուղարության նախկին աշխատակից:



1988, Գյումրի, դժոխքը երկրի վրա:

## «Երկրաշարժը մեզ համար դեռեւս չի ավարտվել»

«Էրեբունի» հյուրանոցի երկրորդ մասնաշենքն արդեն 16 տարի դարձել է երկրաշարժից հետո Երեւան տեղափոխված գյումրեցիների բնակավայրը: Երկար միջանցքում կողք-կողքի դասավորված սենյակներում բնակվում են բազմաթիվ գյումրեցի ընտանիքներ, սակայն այս մասնաշենքը վաճառելուց հետո վերջիններիս այստեղ մնալը դարձել է կասկածելի:

Մարիետա Մանուկյանը իր տղայի հետ «Էրեբունի» հյուրանոցում է բնակվում 15 տարի: Ընտանիքի հետ Երեւան է տեղափոխվել 1988 թ. հունվարին: «Երկրաշարժի ժամանակ ես աշխատանքի էի, ամուսինս փողոցում էր, տղաս դպրոցում էր, իսկ աղջիկս՝ Երեւանում: Տղայիս դպրոցի մի մասը փլվեց: Նա դպրոցի կանգուն հատվածում էր այդ օրը դաս անում: Դեկտեմբերի 7-ին մեր ընտանիքում կորուստներ չեղան, սակայն կորցրինք մեր բնակարանը եւ լավ ապագայի հույսը», ասում է տիկին Մարիետան: Երկրաշարժի աղետալի հետեւանքն այս ընտանիքը զգում է մինչ օրս: Մարիետա Մանուկյանը երկրորդ կարգի հաշմանդամ է, ստանում է 5000 դրամ թոշակ: Ամուսինը զոհվել է 1992 թ. արցախյան պատերազմում: Որդին բանվորի աշխատանք է կատարում, ստացած գումարը հազիվ բավարարում է լույսի վարձին: Ապրում են մի փոքրիկ սենյակում, իսկ ողջ ունեցվածքը իրենց անկողինն է եւ հագուստները: «Գյումրիում հերթագրված ենք բնակարան ստանալու համար, սակայն, Աստված գիտի, թե երբ կստանանք: Այս սենյակում էլ պարզ չէ, թե որքան կբնակվենք: Ապրում ենք առանց վաղվա օրվա վրա վստահություն ունենալու, ասում է Մարիետան, միակ ցանկությունս է, որ սեփական անկյուն ունենամ, որդիս աշխատանք ունենա եւ վերջապես կարողանամ որդուս ամուսնացնել»:

Մարիամը եւ Արամը հանդիպել են, սիրահարվել ու ամուսնացել «Էրեբունի» հյուրանոցում: Արամ Կարապետյանին դուրս են բերել դպրոցի փլատակներից, իսկ Մարիամը բակում խաղալիս է եղել: Նրանք եւս իրենց ծնողների հետ Երեւան են տեղափոխվել երկրաշարժից անմիջապես հետո: «1988 թ. 9 տարեկան էի, ամուսինս՝ 12: Երկրաշարժից հետո ես դարձել եմ 3-րդ, իսկ ամուսինս 2-րդ կարգի հաշմանդամ, միասին ստանում ենք մոտ 6000 դրամ թոշակ: Ամուսինս էլ հիմնական աշխատանք չունի», ասում է Մարիամը: Նրանք 2 երեխա ունեն՝ 7-ամյա Սվետան եւ 5-ամյա Վրեժը: Ապրում են փոքրիկ սենյակում, որը ստացել են ամուսնությունից հետո: «Մենք եւս հաշվառված ենք Գյումրիում բնակարանի համար: Չգիտենք, թե երբ կստանանք, իսկ որքան կկարողանանք ապրել հյուրանոցում՝ անորոշ է», նշում է Մարիամը:

Երբ փորձեցինք հյուրանոցի տնօրենությունից ճշտել, թե ինչ ճակատագիր է սպասում երեւանաբնակ գյումրեցիներին, պատասխանեցին, որ այդ մասնաշենքը վաճառված է, եւ իրենք չեն կարող որեւէ տեղեկություն տրամադրել: «1988 թ. ես 15 տարեկան էի, բայց մինչ օրս երազումս տեսնում եմ այդ սարսափելի օրը: Ողջ քաղաքում փոշի էր բարձրացել, ամենուր փլատակներ էին, լացի ձայներ, իսկ մարդկանց դեմքին սարսափ էր դրոշմված, պատմում է տիկին Մարիետայի որդին՝ Արթուրը: Երբեմն մտածում եմ, որ երկրաշարժը մեզ համար այդպես էլ չի ավարտվել, այլ շարունակվում է այլ կերպարանքով»:

ԱՐԵՒԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

## Դոլարի ընթացիկ անկումը շարունակվում է Երեւանի փոխանակման կետերում

Երեկ երեկոյան մայրաքաղաքի արժույթի փոխանակման կետերում ամերիկյան 1 դոլարը գնվում էր 475 դրամով, վաճառվում՝ 480-ով: Փաստորեն, շաբաթ եւ կիրակի շարունակվեց դոլարի աննախադեպ անկումը Երեւանի փոխանակման կետերում: Հիշեցնենք, որ ուրբաթ երեկոյան 1 դոլարը գնվում էր 485 դրամով, վաճառվում՝ 492-ով: 5 օրում ամերիկյան դոլարը հայկական դրամի նկատմամբ արժեզրկվել է 5 տոկոսով: Մոտ մեկ ամիս Երեւանի փոխանակման կետերում 1 դոլարը գնվում էր 500–505 դրամով:

Ըստ Ռոյթեր գործակալության, երկուշաբթի օրվա ընթացքում Նյու Յորքի սակարանում եվրոյի նկատմամբ շաբաթներ շարունակվող ամերիկյան դոլարի անկումը կանգ առավ: Ավելին, դոլարն արժեւորվեց 0,13 տոկոսով: Ուշագրավ է, որ հայկական շուկան այս փոփոխությանը որեւէ կերպ չարձագանքեց: Տնտեսական պարզ տրամաբանությամբ երեկ դրամի նկատմամբ ամերիկյան դոլարը Երեւանի փոխանակման կետերում պետք է արժեւորվեր, սակայն տեղի ունեցավ հակառակը:

Դոլարի արժեզրկմանը կարելի էր նաեւ ուշադրություն չդարձնել, եթե հայաստանյան շուկայում տեղի ունենար դրսից ներմուծվող լայն սպառման ապրանքների գների իջեցում հայկական դրամով: Թեեւ այս տարվա ընթացքում դոլարը դրամի նկատմամբ արժեզրկվել է մոտ 20 տոկոսով, ապրանքների գներն անգամ մեկ դրամով չեն իջել, ավելին՝ որոշ ապրանքներ թանկացել են:

## Ավարտվեց Պուտինի այցը Թուրքիա

### Հին թշնամիները դառնում են նոր գործընկերներ

Երեկ ավարտվեց Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի երկօրյա պաշտոնական այցը Թուրքիա: Նա Անկարա էր ուղեւորվել դեկտեմբերի 5-ին ՌԴ արտգործնախարարի, պաշտպանության, էներգետիկայի եւ արդյունաբերության նախարարների ուղեկցությամբ: Սա 32 տարվա ընդմիջումից հետո պետության բարձրագույն ղեկավարի մակարդակով Ռուսաստանից Թուրքիա առաջին պաշտոնական այցն է: Դա նախատեսվում էր սեպտեմբերի սկզբին, սակայն Բեսլանի ահաբեկչության պատճառով հետաձգվել է:



Այցի առաջին օրն Անկարայում նախագահ Պուտինն այցելել է Քեմալ Աթաթուրքի դամբարան, իսկ երկրորդ օրը հանդիպել է իր թուրք գործընկերոջը՝ Ահմեդ Նեջդեթ Սեզերին, որի արդյունքում ստորագրվել է «Թուրքիայի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ բարեկամության ու բազմակողմանի գործակցության խորացման մասին համատեղ հռչակագիր»: Դրա շրջանակներում կողմերը կնքել են նաեւ 6 պայմանագրեր:

Սեզեր-Պուտին հանդիպմանը քննարկվել են տարածաշրջանային եւ գլոբալ խնդիրներ, ինչպես նաեւ Իրաքին, Աֆղանստանին, ահաբեկչությանը, նեղուցներին, էներգետիկայի բնագավառում ռուս-թուրքական համագործակցությանն առնչվող հարցեր, որոնց թվում Թուրքիայում նախատեսվող երեք ատոմակայանների կառուցմանը Ռուսաստանի մասնակցությունն է:

Հանդիպումից հետո Պուտինը մասնակցել է Սեզերի հետ համատեղ ասուլիսին, ապա եւ այցելել Թուրքիայի ազգային մեծ ժողով, հանդիպելով Մեջլիսի նախագահ Բյուլենթ Արընչին, նրան հրավիրել է Ռուսաստան: Ենթադրվում էին նրա հանդիպումները վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի եւ արտգործնախարար Աբդուլահ Գյուլի հետ:

Պուտինի այցի կարեւորությունը Թուրքիայի համար միանշանակ է: Թերեւս այդ առումով պատահական չէ, որ թուրքական հանրային հեռուստատեսությունն ու մամուլը դեռեւս օրեր առաջ անդրադառնում էին դրան՝ բնութագրելով որպես պատմական: Հատկանշական է, որ Պուտինի այցը լայն արձագանք է գտնում նաեւ աշխարհում, եւ համաշխարհային մամուլը լայնորեն լուսաբանում է համապատասխան գնահատականներով: Ըստ երեւույթին դրանցից պետք է առանձնացնել Եվրամիությանը Թուրքիայի անդամակցությանը դիմադրող ֆրանսիական «Ֆիգարո» թերթի հետեւյալ գնահատականը. «Ժամանակները իրավի փոխվել են, հին թշնամիները տնտեսական գործընկերներ են դառնում»:

Հ. Չ.

ՎԱՇԻՆԳՏՈՆ

## ԱՄՆ-ՎՈՒՈՒԱՄ բարձր մակարդակի հանդիպում 2005-ին

ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ռիչարդ Արմիթեյջը Վաշինգտոնում հանդիպել է ՎՈՒՈՒԱՄ (Վրաստան, Ուկրաինա, Ուզբեկստան, Ադրբեջան, Մոլդովա) անդամ երկրների դեսպաններին եւ ներկայացուցիչներին՝ տարածաշրջանային կայունության ամրապնդմանն ու տնտեսական զարգացմանն ուղղված բազմակողմ նախագծերի քննարկման համար: Արմիթեյջը հույս է հայտնել, որ 2005-ին կայանալիք ԱՄՆ-ՎՈՒՈՒԱՄ բարձր մակարդակի հանդիպումը «կամրապնդի այդ նախագծերը եւ տարածաշրջանային այս դինամիկ եւ կարեւոր կազմակերպության ապագան»:

Երեկ, ի դեպ, Վրաստանի արտգործնախարար Սալոմե Զուրաբիշվիլին Սոֆիայում ԵԱՀԿ նախարարների հանդիպման ժամանակ հայտարարել է, որ չլուծված հակամարտությունների կարգավորման հարցերը պետք է կենտրոնական տեղ զբաղեցնեն ԵԱՀԿ օրակարգում, հաղորդում է «Մեդիամաքսը»: «Մենք ԵԱՀԿ-ին ավելի ակտիվ ներգրավվելու եւ վճռական գործողությունների կոչ ենք անում՝ այդ հակամարտությունները լուծելու համար», ասել է Զուրաբիշվիլին:

Վրաստանի արտգործնախարարը հայտարարել է, որ ՎՈՒՈՒԱՄ անդամ երկրներն ակտիվորեն մասնակցում են միջազգային հակաահաբեկչական կոալիցիային, եւ կոչ է արել չմոռանալ, որ «անջատողական եւ ծայրահեղական ուժերի ստեղծած հանցագործ եւ ահաբեկչական խմբերը սովորաբար տեղակայվում են կենտրոնական կառավարությունների կողմից չվերահսկվող տարածքներում, այսպես կոչված «սեւ անցքերում», որոնք առաջացել են զինված անջատողականության եւ արտաքին ագրեսիայի պատճառով»:

## Բաղապշը եւ Խաջիմբան միավորվեցին

Աբխազիայի նախագահի երկու թեկնածուներ Սերգեյ Բաղապշը եւ Ռաուլ Խաջիմբան երկրի գործող վարչապետ Նոդար Խաշբայի, ինչպես նաեւ Ռուսաստանի գլխավոր դատախազի տեղակալի ու Պետդումայի փոխնախագահի միջնորդությամբ միավորվել են եւ հունվարի 9-ին նշանակված նախագահական ընտրություններին մասնակցելու են միասնական թիմով. Բաղապշը՝ նախագահի, Խաջիմբան՝ փոխնախագահի թեկնածությամբ:

Մոսկվան, որի փաստացի վերահսկողության տակ է Վրաստանից անջատված Աբխազիան, կարողացավ գտնել չճանաչված հանրապետությունում ստեղծված լարված իրավիճակից դուրս գալու ելքը: Հոկտեմբերի 3-ին Աբխազիայում տեղի ունեցած նախագահական ընտրություններում հաղթել էր Բաղապշը, սակայն նրան հնարավորություն չտրվեց զբաղեցնելու նախագահի պաշտոնը, քանի որ Մոսկվայի թեկնածուն Խաջիմբան էր:

